## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Քաղսի համայնք, համայնքի կենտրոն գյուղ Քաղսի
6-րդ փողոց, 1-ին շենք, հեռախոս 099-90-40-50, էլ.փոստ՝ qaxsi.kotayk@mail.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» հոկտեմբերի 2012թվականի **N44**-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՕՐՎԱ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՋՐԱՄԲԱՐԻ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով,
համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 5-րդ թաղամաս, թիվ 1 օրվա կարգավորման ջրամբարի 0,1496հա սանիտարական գոտի հանդիսացող հողատարածքը մինչև 2035թվականի հուլիսի 1-ը, վարձակալության պայմանագրով հանձնել «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ:

2.Քաղսի համայնքի ղեկավար՝ պարոն Դավթյանին. սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան սպասարկման գրասենյակում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գլխավոր տնօրենի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագիրը (պայմանագրերը) կամ դրանց կնքման գործարքը իրականացնելու համար լիազորել իրավասու անձի:

*Կողմ 7* *Դեմ 0* *Ձեռնպահ 0*

*Ավագանու անդամներ՝*

1. Ալեքսանյան Սահակ
2. Գրիգորյան Վաղինակ
3. Դավթյան Սամվել
4. Ենոքյան Էդիկ
5. Խուրշուդյան Գագիկ
6. Խուրշուդյան Գևորգ
7. Վարդանյան Հայկ

Համայնքի ղեկավար Ս.Դավթյան